ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարալանջ համայնք,հասցեն Գ. Սարալանջ
Հեռախոս 077007066

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա.Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ Կից ներկայացնում ենք Լոռու մարզի Սարալանջ համայնքի ավագանու 15.03 .2018թ. 06- Ա որոշումը :

Առդիր 2 թերթ.

Համայնքի ղեկավար ՝ Ա.Սարոյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի*
*Սարալանջ համայնք, հասցե գՍարալանջ,*
*հեռ.077007066էլ. փոստ՝ saralanj.lori@mta.gov.am*

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15 >> մարտի 2018 թվական, 06 -Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 07 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարալանջ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Սարալանջ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Արթուր Ալեքսանյան | | | |
| Գառնիկ Ալեքսանյան | | | |
| Վարդան Հարությունյան | | | |
| Արման Հարությունյան | | | |
| Նունե Բիձյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ա.Սարոյան

(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Կ.Տ

*Հավելված*
*ՀՀ Լոռու մարզի Սարալանջ համայնքի ավագանու*
*2018 թվականի մարտի 15-ի N 06-Ա որոշման*

*ՑՈՒՑԱԿ*

*ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ*

1. *Միքայելյան Վիոլետա Վարուժանի* — *15.000 դրամ :*
   *( Անուն, ազգանուն, հայրանուն)*

2. *Անտոնյան Իսահակ Խանասի* — *20.000 դրամ :*
   *( Անուն, ազգանուն, հայրանուն*

*ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝* — *(ստորագրություն)* — *Ա.Գևորգյան* *(անուն, ազգանուն)*